

Э. Г. ТУМАНЯН, Структура индоевропейских имен в армянском языке. Издательство «Наука», М., 1978, 366 стр.

Երկար ուղի է անցել ու հարուստ ընթացք է ունեցել հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրությունը: Խոր հնությունից եկող հայոց լեզուն իր կառուցվածքային հարուստ իրողություններով պատմահամեմատական լեզվաբանության հետազոտության առարկա է դարձել գրեթե այդ գիտության սկզբնավորման ժամանակներից: Հայտնի է, որ Ֆրանց Բոպի հուշակավոր համեմատական քերականության երկրորդ հրատարակության մեջ ի թիվս այլ լեզուների հայերենը ևս ներառվեց հնդեվրոպական լեզուների ուսումնասիրման ոլորտը՝ որպես այդ ընտանիքին պատկանող լեզու: Դա կատարվեց Պետերմանի և Վինդիշմանի՝ հայերենին նվիրված աշխատությունների հրապարակ գալուց հետո, երբ հայերենի փաստերը մատչելի դարձան գիտական այդ նոր մեթոդը մշակողին ու կիրառողին: Նոր դարագլուխ սկսվեց հայոց լեզվի գիտական ուսումնասիրման համար: Մեր լեզուն որպես հնդեվրոպական լեզու առատ հող դարձավ բազմաթիվ հնդեվրոպաբանների հետազոտությունների համար: Ծագումնաբանական տեսակետից նրա ուսումնասիրությունն ավելի աշխուժացավ, երբ գերմանացի խոշոր լեզվաբան Հյուբշմանը ճշտորեն որոշեց, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում ինքնուրույն ճյուղ է: Այս տեսանկյունից հայերենն ուսումնասիրեցին լեզվաբանության այնպիսի մեծություններ, ինչպիսիք էին Հյուբշմանը, Մեյեր, Հ. Աճառյանը և ուրիշներ: Այդ կարևոր գործը շարունակեց առաջ տարվել նաև նորագույն ժամանակներում: Հիշենք Բենվենիստի, Պիզանի, Զոլտայի, Վինտերի, այլև մեզանում՝ Գ. Զահուկյանի, է. Մակակի, է. Աղայանի և ուրիշների կատարած աշխատանքը: Ստեղծվել են բազմաթիվ արժեքավոր աշխատություններ՝ նվիրված հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների պատմահամեմատական քննությանը: Խիստ ակնհեր է, որ կատարվել է անգնահատելի գործ:

Մակայան, այդուհանդերձ, այս հարստության մեջ համեմատաբար քիչ են ամփոփիչ ու ամբողջացնող բնույթի աշխատությունները, որոնք միաժամանակ որոշ կողմերով առաջ են տա-

նում նյութի քննությունը: Այդպիսիների կարիքը խիստ զգալի է հատկապես պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ մինչ այժմ վեր հանված նյութի յուրացման, հետաքրքրվողների ճանաչողության շրջանակների ընդլայնման առումով:

Իր բնույթով հենց այդպիսի մի գործ է բանասիրական գիտությունների դոկտոր է. Գ. Թումանյանի Նոր աշխատությունը՝ «Հայերենի հնդեվրոպական անունների կառուցվածք»: Գիրքը նվիրված է հայերենի հնդեվրոպական այն բառերի (արմատների) կազմության ուսումնասիրմանը, որոնք ունեն խոսքիմասային անվանական արժեք (չհաշված թվականները): Խնդիրը, իհարկե, նոր չէ, բայց չափազանց կարևոր է ու հետաքրքրական:

Աշխատանքի կարևորությունը ճիշտ պատկերացնելու և այն գնահատելիս լավ կողմնորոշվելու համար անհրաժեշտ ենք համարում վերհիշել մեծ համեմատաբան Հ. Աճառյանի՝ պատմահամեմատական լեզվաբանությանը տված հետևյալ բնութագիրը. «Այս է համեմատական լեզվաբանության մեծագույն արժանիքը, որ կարողացավ մինչև անգամ արմատ կարծված բառերը քանդել ու պարզ արմատը գտնել, և այս բանը կատարվեց միմիայն ցեղակից լեզուների համեմատության շնորհիվ» («Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների», հ. 3, Երևան, 1957, էջ 118): Իր միտքն ավելի ցայտուն դարձնելու համար Աճառյանը զուգադրաբար հիշեցնում է քիմիայի կատարած դերը: «Լեզվաբանության այս արարքը,—գրում է նա,—նույն է քիմիայի հետ: Այստեղ էլ ունենք մի խումբ մարմիններ, որ ամբողջ մի դար պարզ տարր (էլեմենտ) էին համարվում. ի՞նչ վերջին ժամանակներս գիտությունը անջատեց դրանք մասերի և կամ միացրեց այլ տարրերի և կամ գտավ նոր տարրեր» (նույն տեղում):

Այո՛, պատմահամեմատական լեզվաբանությունը, թափանցելով մեզ իբրև արմատ ներկայացող բառերի հորինվածքային բուն ծալքերը, վեր հանեց շատ ու շատ գաղտնիքներ, որոնք բառակազմական շրջանակներից ավելի

հեռուն են գնում: Սա էլ առաջ է բերել մասնագետների բուն հետաքրքրությունը հիշյալ խնդրի նկատմամբ: Բանն այն է, որ բազում դարերի ընթացքում հազարավոր սերունդների հաջորդական փոփոխությունները հանգեցնում են նրան, որ նրանց լեզվի երբեմնի բաղադրյալ կազմությունները այլևս չեն գիտակցվում, և դրանք ներկայանում են որպես արմատներ: Այդպես են և մեր լեզվի հնդեվրոպական շատ արմատներ: Հիշենք մի երկու օրինակ: Հայերենի մեջ անձն, բերան, մառդ բառերը գիտակցվում են իբրև միաձուլված կազմություններ (արմատներ), բայց ըստ ծագման նրանք միաձուլված չեն, բաղադրված են մեկից ավելի ձևություններից: Անձն բառը ծագում է հնիս. *ang¹hen* ձևից, որը կազմված է եղել *an³* «փշել, շնչել» պարզ արմատից, *u¹n* ածականից և *en* ածանցից: Բերան-ը ծագում է *bher* «ծակել, ճեղքել» պարզական արմատից, նրա ան մասը ածանց է՝ հնիս. *no-*ից: Իսկ մառդ-ը ծագում է հնիս. *mer* «մեռնել» պարզական արմատից և *to* մասնիկից, որը հիմք լեզվի անցյալ դերբայի մասնիկն էր: Ըստ այդմ բառը նախնական վիճակում նշանակել է «մեռած» և այլն: Նման վերլուծություններն են մղել է. Գ. Թումանյանին ուսումնասիրելու, ի մի բերելու դրանք հատկապես անուն-արմատների շրջանակներում և ստեղծելու մի ամբողջական աշխատություն: Նրան հետաքրքրել են վաղնջական ժամանակների բառային բաղադրությունների բնույթը, տիպերը, կազմիչ մասերի էությունն ու երբեմնի արժեքը, նրանց բաշխումն ընդհանուր բաղադրության մեջ, հետագա ձևային ու գործառական փոփոխությունները և այլն: Հենց սրանք էլ կազմել են աշխատության բուն նպատակը, որն իրագործվել է որոշակի հաջողությամբ: Ամեն քայլափոխում զգացվում է հեղինակի լավատեղյակությունը ինչպես քննարկվող փաստական նյութի, նույնպես և նրա մասին մինչ այդ ստեղծված գիտական գրականության ասպարեզում: Դրան գումարվում են նաև նրա սերն ու ջանադիր, հետևողական աշխատանքը: Դրանք էլ պայմանավորել են գրքի անուրանալի հաջողությունը: Նշենք. նաև, որ հեղինակը խստորեն չի սահմանափակվել իր թեմայի անձուկ սահմաններում, այլ շոշափվող հարցերը ներկայացրել է պատմահամեմատական լեզվաբանության ձեռք բերած գիտական նվաճումների լայն խորքի վրա՝ մասնավորապես հայոց լեզվի պատմահամեմատական հետադոտությունների հաշվառումով: Այս հանգամանքը առավել շարժել նպաստում է մի կողմից բուն թեմայի հիմնավոր քննությանը, մյուս կողմից՝ շարադրանքի դյուրին ընկալմանը: Հեղինակի այսպիսի մոտեցումից է թելադրված

նրա աշխատության յուրահատուկ կառուցվածքը՝ ներածական՝ օժանդակ և բուն մասերով:

Է. Թումանյանը գրքի առաջարանում ճշտորեն նշում է ընտրած թեմայի կարևորությունը և դրա հիման վրա նախատեսում իր անելիքները: Նա ընդգծում է, որ մինչ այժմ պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ հայերենի հնդեվրոպական բառապաշարի ուսումնասիրությունն ընթացել է նոր զուգաբանությունների (իզոգլոսների) հայտնաբերման ու վերհանման, նրանց տարածքային տարածվածության որոշման, ստուգաբանությունների ճշգրտման ուղղությամբ, իսկ այժմ հասունացել է հնդեվրոպական ծագում ունեցող բառային ամբողջական միավորների կազմության, նրանց երբեմնի բաղադրուցիչ տարրերի քննության, այլև հայկական հոդի վրա բաղադրությունների կրած փոփոխությունների ուսումնասիրման խնդիրը:

Նա միաժամանակ նկատում է, որ մեզ հայտնի հնդեվրոպական լեզուների (այդ թվում և հայերենի) բառակազմական հիմնական տիպերը սաղմնավորված ձևով եղել են հնդեվրոպական նախալեզվում: Սակայն փոխանցվելով ժառանգ լեզուներին՝ այստեղ արդեն այդ կազմությունները մթազնվել են. և առաջ են եկել նաև նոր երևույթներ, ուստի ուսումնասիրողը պիտի բացահայտի հնագույն կազմությունները, նրանց մեջ մտած տարրերը և հետագայի կրած փոփոխությունները: Մրանով ուսումնասիրողի առաջ ծառանում են ակնհայտ դժվարություններ: Ինչպես նախորդ ուսումնասիրողները, է. Թումանյանը ևս հաղթահարել է ոչ քիչ դժվարություններ: Նա կամեցել է ցույց տալ, թե հնդեվրոպական բառերի կազմության ի՞նչ կաղապարներ են տիրապետող դարձել հայերենում, ո՞ր կաղապարներն են այստեղ անհետացել ու տեղի տվել նորագոյացումներին: Հասկանալի է, որ այդ կաղապարները որոշվում են արմատի համեմատությամբ, ուստի և ուսումնասիրողը անհրաժեշտաբար պիտի անդրադառնար նաև հնդեվրոպական արմատի տեսությանը:

Ներածականի կարգով հեղինակը կանգ է առնում հնդեվրոպական նախնական շրջանի վրա. ըստ եղած գրականության շոշափում է հնդեվրոպական երբեմնի ընդհանուր լեզվի, ժողովրդի, նրա նախահայրենիքի, գոյության ժամանակների և նման այլ հարցերի հետ կապված տեսականները և այլն: Առանձին հատվածով անդրադառնում է հայերենի տարածքային բնութագրին, հիշատակում է հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենի գրաված դիրքին վերաբերող կարծիքները՝ Հյուբշմանի գյուտից մինչև մեր ժամանակները՝ նշելով, թե նրա ինքնուրույն ճյուղ լինելն ընդունելով հանդերձ ինչպիսի՞ հարաբերություններ են դիտվել մյուս

Ճյուղերի հանդեպ: Միայն պետք է զարմանալ, թե հեղինակն ինչու է կանգ չի առել նաև Հ. Աճառյանի կազմած գծապատկերի վրա, որով ըստ ի հայտ բերված զուգաբանությունների ցույց է տրվում հայերենի մերձավորության աստիճանը տվյալ լեզվաընտանիքի մյուս ճյուղերի նկատմամբ:

Ուսումնասիրողի համար էական խնդիր է եղել հետազոտվող բառերի ցանկի ընտրությունը: Նա նախօրոք նշում է ընտրության սկզբունքները, որոնց հիման վրա ներառել է գոյական և ածական անունները, իսկ դրանցից էլ այնպիսիները, որոնք կա՛մ վկայված են հնդեվրոպական բոլոր լեզուներում, կա՛մ նրանց զգալի մասում (ոչ պակաս երկու լեզվից): Միայն մեկ լեզվում վկայված զուգաբանությունները նկատի չեն առնվել: Այս կապակցությամբ էլ հեղինակն անդրադառնում է մեր լեզվի բառապաշարի հնդեվրոպական շերտին, որոշակի թվերով ցույց տալիս համապատասխան տվյալները: Դրա համար նա դիմել է Յու. Պոկորնու բառարանին: Նա նշում է, որ իր հաշվումներով հայերենի հնդեվրոպական բառերի ընդհանուր բանակը 1240 է, մինչդեռ ըստ Աճառյանի 1000-ի չի հասնում: Տարբերությունը նրանից է, որ Աճառյանը հաշվել է միայն արմատները՝ առանց ածականավոր և ածանցավոր տարբերակների, իսկ ինքը ներառել է սրանք ևս: Ապա այդ բառերի արտասանական ձևավորման մասին զաղափար տալու նպատակով Ժյուքուայի օրինակով ուսումնասիրել և ցույց է տվել նրանց առաջին և վերջին հնչյունների հաճախականությունը:

Գրքի հետագա շարադրանքը ներկայացված է չորս գլուխներով: Առաջին գլուխը վերնագրված է այսպես. «Հնդեվրոպական հնչյունական համակարգի արտացոլումը հայոց լեզվում», որը թեև ըստ էության չի մտնում աշխատության հիմնական նպատակների մեջ, բայց կարևոր է առաջադիր հարցերի քննության և հիմնական նյութի ճիշտ ընկալման առումով: Այս գլխում ցույց են տրվում հնչյունական համապատասխանությունները, որոնք նկատվել ու վեր են հանվել հայերենի ուսումնասիրման մեջ պատմահամեմատական մեթոդի կիրառման ողջ պատմության ընթացքում: Մեկ առ մեկ ցուցադրվում են հնդեվրոպական ձայնավորների, երկբարբառների, եռաբարբառների և բաղաձայնների համապատասխանությունները հայերենում: Դրանք ուղեկցվում են ազգակից տարբեր լեզուներից բերված բնորոշ զուգաբանությունների օրինակներով: Բացի առանձին բաղաձայններից, այստեղ ցույց են տրվում նաև բաղաձայնական այնպիսի խմբերը, որոնք տվյալ բաղաձայններով համապատասխան դրսևավորումներ են ունեցել հայերենում (րր, րծ, րկ,

րտ, րդ և այլն): Սրանով աշխատությունը ձեռք է բերում նաև ձեռնարկի բնույթ, որից կարող են օգտվել նաև նրանք, ովքեր նոր են սկսում ծանոթանալ պատմահամեմատական մեթոդին և նրա կիրառմանը: Չմոռանանք նշել, որ է. Թու մանյանը մեկ անգամ ևս հաստատում է այն՝ ճշմարտությունը, թե հայերենի բաղաձայնական համակարգի ձևավորման մեջ առանցքային դեր են խաղացել տեղաշարժը և քմայնացումը, վերջինիս շնորհիվ են առաջացել մեր լեզվի որոշ պայթածփականներ ու շփականներ:

Բուն նյութի քննությունն ընդգրկում են հաջորդ հինգ գլուխները: Երկրորդ գլուխն է «Բառակազմության հնդեվրոպական կաղապարները և անվանական հիմքերի կառուցվածքի ընդհանուր հարցերը»: Այստեղ ընդգծվում է հնդեվրոպական հիմք լեզվի անվանական հիմքերի կառուցվածքի նկարագրման անհրաժեշտությունը: Քանի որ աշխատության հիմնական նպատակն է պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ վերլուծել և ցույց տալ հայերենի հնդեվրոպական անունների սկզբնական կազմությունը՝ ըստ ճշգրտված ստուգաբանությունների, ապա և նրանց փոխանցումը և հետագա զարգացումը հայոց լեզվի հողի վրա, ուստի դա անհնարին կլինի առանց նախալեզվային վիճակին անդրադառնալու և բնականաբար պետք էր սկսել նախալեզվի անվանական հիմքերից: Իսկ սրանց կազմության կաղապարները ցույց տալու համար անհրաժեշտ էր առանձնացնել այդ հիմքերի կազմիչ տարրերը՝ արմատները, ածանցները, ածականները (դետերմինատիվները), հիմնային ձայնավորները: Հենց այդպես էլ վարվում է հեղինակը: Նա նախապես գրում է, որ հնդեվրոպական ընդհանուր շրջանում անվանական բառերը ներկայանում էին բառակազմական տարբեր տիպերով՝ և՛ արմատներով, և՛ բաղաձայնամբ ու կրկնավորությամբ, և՛ ածանցմամբ: Դրանց մեջ դեր ունեին նաև ձայնդարձն ու շեշտը և այլն: Արմատական անվանական հիմքերի մասին խոսելուց հետո անցնում է ածանցական հիմքերին: Սրանց մեջ էլ տարբերում է երկու տիպ՝ ա) հիմնային ձայնավորով կազմություններ, բ) ածանցավոր կազմություններ: Առաջինները արմատականներից տարբերվում են նրանով, որ արմատից հետո ունենում են հիմնային ձայնավոր հնչյուն, իսկ երկրորդներում արմատից բացի, լինում են նաև ածանցներ: Իհարկե, հայերենի մեջ պահպանվել է հնդեվրոպական ածանցների մի մասը: Ճիշտ է նկատվում, որ հաճախ ածանցները հիմքում զուգակցվում են, և այդպիսով լինում են հիմքեր առաջնային և երկրորդային ածանցներով: Այնուհետև առանձին-առանձին բերվում են հնդեվրոպական անվանական հիմքերի ածանց-

ները և ցույց տրվում դրանց փոխանցումները և ձևափոխումները հայերենի մեջ՝ ձևաված արմատներին: Հատուկ տեղ է տրվում բարդացմամբ ու կրկնությամբ կազմված անվանական հիմքերին ու նրանց բնութագրմանը՝ ըստ հայերենի փաստերի: Լեզու ամփոփ կերպով խոսվում է բառակազմության մեջ ձայնդարձի և շեշտի դերի մասին:

Ընդարձակ հատված է հատկացված հնդեվրոպական արմատի ընդհանուր տեսությանը: Այդ տեսությունը բավական հարուստ պատմություն ունի: Գրքում հիշատակվում են մի շարք բնորոշ տեսություններ, որոնք մշակվել են Կուրցիուսի, Սոսյուրի, Մեյեի, Բուգմանի, Հիրտի և այլոց կողմից: Հեղինակը հետևում է այն մասնագետներին, որոնք ընդունում են, որ այսպես կոչված աթեմատիկ (աւերուն) արմատներն առավել հնատիպ են, քան թեմատիկները (սերնավորները): Վերջիններիս հիմնային ձայնավորները, ինչպես պարզել է Մեյեն, ձևակազմական տարբեր են եղել և նախապես չեն մտել արմատի կազմի մեջ, այլ, ավելացել են նրա վրա ձևակազմական նշանակությամբ:

Այնուհետև քննվում է աճականների, ածանցների և նրանց փոխհարաբերության խնդիրը: Մասնագետների շրջանում տարաձայնություններ են եղել հատկապես աճականների վերաբերյալ: Ոմանք ընդունել են, որ աճականները երբեմնի բառակազմական ածանցներ են, որոնք հետագայում կորցրել են իրենց իմաստային արժեքը: Իսկ ոմանք էլ դրանք որոշակիորեն հակադրել են ածանցներին՝ դիտելով որպես արմատի ընդլայնիչներ կամ որոշակիչներ (определители): Ինչպես երևում է հաջորդող շարադրանքից, հեղինակը հակված է վերջիններիս կողմը: Նա առանձնակի ուշադրության է արժանացնում Պերսսոնի տեսակետը հնդեվրոպական արմատների տարբերակների մասին, ըստ որի միևնույն արմատին զուգակցվել են տարբեր աճականներ և այդպիսով առաջ բերել արմատների տարբերակներ: Աշխատության մեջ աչքաթող չեն արված նորագույն տեսությունները: Զգալի տեղ է հատկացված Բենվիստի, Կուրիլովիչի, Մակաևի տեսություններին: Հետաքրքրական է աճականի և ածանցի բնույթի որոշումը լեզվաբանության կառուցվածքային ուղղության դրույթների կիրառման տեսանկյունից: Այդ առումով ուշագրավ են Մակաևի բնութագրումները. տարածամանակյա առումով աճականները և արմատները վերաբերում են հնդեվրոպական ընդհանուր լեզվի ժամանակագրական տարբեր կտրվածքների. աճականները վերաբերում են շատ ավելի հին ժամանակային կտրվածքի, ածանցները՝ ավելի ուշ, թեև առանձին դեպքերում որոշ աճականներ կարող էին ածանցների

իմաստազրկման արդյունք լինել: Համաժամանակյա առումով աճականներն ու ածանցները տարբերվում են գործառնար և բաշխումներեն. ածանցը իմաստավոր տարր է և բառի մաս է, աճականը ձևական սարր է և արմատի մաս է: Աճականը միշտ տեղ է գրավում արմատի և ածանցի միջև: Նրա հաջորդումը ածանցին բացավում է, միշտ ածանցն է հաջորդում նրան: Գործառնար ածանցը բառի ձևավորիչն է, աճականը՝ արմատի: Կազմության տեսակետից աճականը միշտ միատարր է (e/o, i, u, k, g, t, d, n, r, l, s), իսկ ածանցը կարող է լինել և՛ միատարր, և՛ բազմատարր, կարող է ունենալ կառուցվածքային կաղապարներ՝ ձայնավոր+բաղաձայն, բաղաձայն+ձայնավոր (k, l, n, ko, lo, tro, lo, er, no և այլն): Ուրեմն հնդեվրոպական հիմք լեզվի շրջանում աճականները և ածանցները, տարբեր բնույթ ունենալով, տարբեր տեղ են ունեցել բառակազմության և հիմքակազմության մեջ: Սա ճիշտ եզրակացություն է, որը և ընդունում է աշխատության հեղինակը:

Նրորորդը առանցքային գլուխն է՝ «Հայերենի հնդեվրոպական անունների կառուցվածքային վերլուծություն» վերնագրով: Հեղինակը ճիշտ է նկատել, որ հնդեվրոպական բառերի կառուցվածքային փոփոխությունները հայերենի մեջ փոխանցվելիս հիմնականում կապված են վերջին վանկի հետ: Իսկ դա բացատրվել է շեշտի գործոնով: Համեմատաբանները վաղուց հիմնավորել են, որ հնդեվրոպական երաժշտական շեշտը նախահայերենում վերածվել է ուժական շեշտի և դրվել է նախավերջին վանկի ձայնավորի վրա, իսկ վերջին վանկն այդպիսով թուլանալով ընկել է ուղղականում և հայցակալում, վերականգնվել է թեք հոլովներում: Է. Թումանյանը գտնում է, որ այդքանը դեռ բավական չէ բոլոր տիպերի հոլովումներին ենթարկվող անունների կառուցվածքային առանձնահատկությունները բացատրելու համար: Նա նշում է, որ, օրինակ, ձայնորդահանգ բառերի վերջին հնչյունները (l, r, n) պահպանվում են թե՛ ուղիղ և թե՛ թեք հոլովներում, ուստի դա չի կարելի բացատրել վերոհիշյալ ընդունված ձևով: Նա, հենվելով Հիրտի ուսումնասիրությունների վրա, մատնացույց է անում, որ հնդեվրոպական հիմք լեզվում կային տարբեր բնույթի շեշտ կրող հիմքեր, և այն տեսակետն է հայտնում, որ նախահայերենում ևս գործել են տարբեր բնույթի շեշտեր, որոնք առաջ են բերել տարբեր փոփոխություններ, կարևոր նշանակություն է ունեցել նաև բառի վանկերի քանակը: Հենց վերջին հանգամանքով է բացատրվում նաև այն, որ հնդեվրոպական ձայնորդահանգ երկվանկ բառերը գրարարի մեջ

պահպանվել են նույն վանկաքանակով: Իհար-
պես, այստեղ ճշմարտություն կա, սակայն փաս-
տերը դեռ այնքան չեն, որ դիտական վարկածը
հասցվի հստակ ապացուցման: Վերջնական իրո-
դությունն այն է, որ անվանական հոլովման
մեջ նախահայերենում ձևավորվել են երկու տի-
պի հիմքեր՝ «բնավոր» (թեմատիկ) և «անբուն»
(աթեմատիկ): Դրանցով էլ որոշվել են ան-
վանական հոլովման տիպերը: Նշվում է, որ բա-
ռերի հոլովման յուրաքանչյուր տիպ (իհարկե,
խոսքը հնդեվրոպական ծագում ունեցողների
մասին է) կախում է ունեցել սկզբնատիպ բառի
կառուցվածքային վերջին տարրից՝ ածանցից
կամ «բնավոր» (թեմատիկ) հիմքի ձայնավո-
րից: Հիմնական միտումը փոխանցվելիս եղել է
այն, որ որոշ կարգի ածանցների (ինչպես՝
ti, lo, ko, ու, ոօ և այլն) բաղաձայնական
տարրը հայերենի մեջ ձուլվել է արմատին, իսկ
ձայնավորն առանձնացել է, որը և թեք հոլով-
ներում ներկայանում է որպես հոլովիչ:

Այս և նման այլ կարևոր հարցերի շոշափու-
մից հետո հեղինակն անցնում է հայերենի
հնդեվրոպական գոյական ու ածական անուն-
ների կազմության վերլուծությանն ու հոլովման
տիպերի բնութագրին: Ստուգաբանական բառա-
րաններից, զանազան այլ աշխատություններից
նա նախ ընտրել է ավելի քան 550 բառ, որոն-
ցից 448-ը «բնավոր» հիմքով, 73-ը՝ «անբուն»,
30-ը՝ տարատիպ, ապա զտելով կասկածելի
ստուգաբանություններից՝ վերջնականապես թո-
ղել է ցուցակում 277 «բնավոր», 50 «անբուն»
հիմք ունեցող և 30 տարատիպ բառեր: Դրանք
էլ քննել է երեք ենթաբաժիններով՝ ըստ «բնա-
վոր», «անբուն» և տարատիպ հիմքերի: «Բնա-
վոր» հիմք ունեցող բառերի հոլովումն ըստ
ընդունված կարգի ներկայացվում է հիմնային
ձայնավորների հիման վրա կատարված տեսա-
կավորումով՝ o, o/a, i/a, i, u: Հնդեվրոպական
«բնավոր» բառերի հոլովման տեսակարար
կշիռը մյուս (ոչ հնդեվրոպական) նույնպիսի
հոլովում ունեցող բառերի հանդեպ ցույց տա-
լու նպատակով է. Թումանյանը կատարել է հե-
տաքրքրական հաշվումներ: Ըստ այդ հաշվում-
ների՝ o հիմքի 617 բառերից հնդեվրոպական են
170-ը (27,6%), o/a հիմքի 80 բառերից՝ 23-ը
(28,7%), i/a հիմքի 1030 բառերից՝ 98-ը
(9,5%), i հիմքի 810 բառերից՝ 129-ը (16%),
u հիմքի 103 բառերից՝ 28-ը (27,1%): Հայե-
րեն բոլոր «բնավոր» անունները 2040 են, հնդեվ-
րոպականները՝ 448 (22%): Իհարկե, այս դեպ-
քում հնդեվրոպական ծագում ունեցողները ներ-
կայացված են առանց հեղինակի կողմից (կամ
ընդհանրապես) կասկածելի համարված ստու-
գաբանությունների զտման: Այս հաշվումներով
մի կողմից պարզ է դառնում հայերենի այդ
17 Հանդես, № 3

կարգի ամբողջ բառաքանակի պատկերն ըստ
«բնավոր» հոլովման տիպերի, մյուս կողմից՝
նրանց մեջ հնդեվրոպականների գրաված տեղը:
Իսկ միայն հնդեվրոպական այդպիսի բառերի
համեմատումը միմյանց հետ ցույց է տալիս
տարբեր տեսակի հոլովումների պատկանող բա-
ռերի քանակային հարաբերակցությունը: Այս-
պիսով պարզվում է, որ առաջին տեղում են ո
հոլովման բառերը (170), դրանց հաջորդում են
ի հոլովման պատկանողները (129), ապա՝ ի-ա
հոլովման ենթարկվողները (98), ավելի քիչ
ծավալ ունեն ու (28) և ո-ա (23) հիմքերով
հոլովվող բառերը: Սրանք կարևոր տվյալներ
են, ուրեք վերհանումն արդյունք է ուսումնա-
սիրողի տքնաջան աշխատանքի:

Քննությունը տարվում է ըստ առանձին հո-
լովումների պատկանող բառերի՝ հետևյալ կար-
գով. նախ տրվում է տվյալ հոլովման պատ-
կանող բառերի ու նրանց հնդեվրոպական հիմ-
քերի ընդհանուր բնութագիրը, այնուհետև բեր-
վում է բառերի ցուցակը հայերեն գրությամբ,
գիտական տառադարձությամբ և իմաստների
նշումով, այս բոլորից հետո որոշ ընտրությամբ
վերցվում են դրանցից մի շարք բառեր՝ ազ-
գակից լեզուների որոշ զուգաբանությունների
համեմատությամբ: Մեկ առ մեկ վերլուծվում ու
ցուցադրվում է դրանց կազմությունը: Այսպես
օրինակ՝ ո հոլովման պատկանող բառերի մա-
սին նախ ասվում է, որ այս բառերը ծագում
են հնդեվրոպական հիմք լեզվի երեք տիպի
կաղապարի կազմություններից՝ ա) այնպիսի
բաղադրյալ բառերից, որոնց կազմության մեջ
հնդեվրոպական ածանցներն օժտված են եղել
o ձայնավորով. դրանցից են հետևյալ ածանց-
ները՝ no (eno, ono), ro (ero, oro), lo, tro
(tlo), dhro (dhlo), μ) հնդեվրոպական s հիմ-
քով կաղապարներից, գ) հնդեվրոպական
այնպիսի կաղապարներից:

Հիմքերի փաստական համոզիչ բնութագրում-
ներից հետո տրվում է բառերի ցուցակը, ապա
ընտրությամբ վերլուծվում են բառերի կազմու-
թյունները՝ o հիմքի՝ ազգակից լեզուների բնո-
րոշ զուգաբանությունների հենարանով: Այս
ձևով էլ ներկայացվում են «բնավոր» բառերի
մյուս խմբերը՝ իհարկե, յուրաքանչյուր խումբն
իրեն հատուկ հիմնային կաղապարների ու հո-
լովման տեսակների բնութագրումով:

Նույն կարգով են քննվում «անբուն» (բաղա-
ձայնական) հիմք ունեցող բառերը: Սրանց հա-
մար ևս կատարված են կարևոր հաշվումներ,
որոնցով պարզվել է, որ հայերենում (այս դեպ-
քում՝ հին հայերենում՝ գրաբարում) ո հիմքով
բառերի թիվն է 130, որոնցից հնդեվրոպական
ծագում ունեն 56-ը (43%), ի հիմքով՝ 46,
դրանցից հնդեվրոպական ծագումով՝ 15 (33%)

և 1 հիմքով՝ 6, որոնցից միայն 2-ն են հնդեվրոպական (33%)։ Ուրեմն այստեղ էլ առաջին տեղում են ը հիմքով բառերը, աննշան թիվ են կազմում 1 հիմքով բառերը։ Հասկանալի պատճառներով ը հիմքին պատկանող բառերի մեջ ներառված են և՛ ա պարզ, և՛ ի-ա խառն (ներքին) հոլովումներին ենթարկվող հնդեվրոպական բառերը։ Դրանք, ըստ բառերի վերջնահնչյունների և համապատասխան հերթագայության ներկայացվում են չորս ենթախմբերով՝ ա) ան/ուն, բ) ին/եան, ուն/ուան, ին/եան, գ) ըն/ին, ուն/ան, դ) ըն/ին/ան։ Սրանք քննվում են հերթականությամբ, ապա վերլուծվում են մյուս հիմքերի կաղապարներին պատկանող բառերը՝ հայերենի մեջ նրանց ստացած համապատասխան ձևավորումներով, փոխակերպումներով։

Առանձին բաժնով քննվում են, այսպես կոչված, տարատիպ հիմքեր ունեցող բառերը։ Սրանց մեջ են առնված այնպիսիները, որոնք հոլովվում են տարարմատ բառաձևերի զուգակցությամբ (սուպլերիվությամբ) կամ ունեն յուրահատուկ հերթագայություն և կամ հոլովման մի հիմնական տիպի հետ հետևում են այլ բնույթի հոլովումների և այլն։

Դրանցից են՝ ալն, այր, աղախին, ասր, բարձր, գարուն, գիւղ, քանձր, կին, մեղր, տիւ, ունկն և այլն։ Ցույց տալով այսպիսի բառերի հոլովման յուրահատուկ դրսևորումները հին հայերենում՝ հեղինակը հետամուտ է լինում պարզաբանելու, թե հնդեվրոպական ընդհանուր շրջանում դրանց հիմքերը կազմության ի՞նչ կաղապարներ են ունեցել, և որտեղից են գալիս այդ յուրահատկությունները։

Այս բոլորից հետո պարզ են դառնում այն օրինաչափությունները, որոնց շնորհիվ հայերենի հոլով լրա կերպարանափոխվել են հնդեվրոպական ծագում ունեցող բառերը (տվյալ դեպքում՝ անունները)։ Հենց դրանց ամփոփմանն էլ նվիրված է աշխատության վերջին գլուխը։ Այստեղ մեկ անգամ ևս ընդգծվում է, որ հնդեվրոպական ընդհանուր շրջանից հայերենի ճյուղավորման ու առանձնանալու հիմնական պատճառներից մեկը բառերի ձևավորման կառուցվածքային սկզբունքների զարգացումն է։ Ուստի հայերենի, որպես հնդեվրոպական լեզվի, ուսումնասիրության համար խիստ արժեքավոր է այդ օրինաչափությունների ու սկզբունքների հետազոտումը։ Այս տեսանկյունով աշխատության հեղինակը ամփոփում է անվանական բառերի կազմության տարբեր տիպերի ձևավորման կարևոր օրինաչափությունները։

Գրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը հասել է իր հիմնական նպատակին՝ ստեղծելով ամբողջական մի աշխատու-

թյուն հայերենի հնդեվրոպական ծագում ունեցող գոյականների և ածականների բառային-քերականական հորինվածքի վերաբերյալ, որը պալիս է ուրույն տեղ զբաղեցնում հայերենի պատմահամեմատական հետազոտմանը նվիրված գրականության մեջ։

Ընդհանուր առմամբ հաջողված այս աշխատության վերաբերյալ ունենք որոշ դիտողություններ, որոնք կկամենայինք ներկայացնել հեղինակի ուշադրությանը։

1. Հայտնի է, որ հայերենը, հնդեվրոպական հիմք լեզվից ճյուղավորվելով, շատ փոփոխությունների է ենթարկվել։ Չանազան այլ իրողությունների հետ նրա մեջ հանդես են եկել և նորագոյացումներ (ИННОВАЦИИ, որոնց մասին նշում է և գրքի հեղինակը)։ Դրանց մի զգալի մասը վերաբերում է հենց այստեղ քննարկվող հարցերին։ Հնդեվրոպական ծագում ունեցող անունների հետ կապված նորագոյացումները կազմության առումով այս աշխատության մեջ հատուկ քննության առարկա պիտի դառնային։ Դա ավելի ամբողջական կդարձներ հետազոտության պատկերը։ Հիշենք միայն մեկ իրողություն։ Հայտնի է, որ հայերենի մեջ որոշ փոփոխություններ «անբուն» անունների հոլովումը «բնավոր»-ի անցման միտում է ցուցաբերել։ Ե հոլովման պատկանող բառերի զգալի մասը հատկապես հոգնակի թվում ձգտել է անցնել ա արտաքին (վերջադրական) հոլովման, ինչպես՝ դստերաց, ոսկերաց և այլն։ Այդ կարգի որոշ բառերի համար այդպիսի հոլովումը դարձել է գերիշխող։ Նման փաստերը, իհարկե, հայտնի էին հեղինակին։ Սակայն լավ կլիներ, որ դրանք ևս ուշադրության արժանանային, մանավանդ որ անմիջականորեն առնչվում են գրքի հիմնական խնդիրներին։ Մեր խոսքը չի վերաբերում նորագոյացումներին ընդհանրապես, այլ՝ միայն հիմնային նորագոյացումներին։

2. Հայերենի մեջ հիմքերի փոխանցումներ են եղել նաև «բնավոր» ձևերում։ Դրանց քննությանը կարելի էր ավելի լայն տեղ տալ։ Որոշ իրողություններ սաղմնավորվել են դեռ հիմք լեզվի շրջանից կամ նախահայերենում և ծավալվել են դրային շրջանում, որոնց ուսումնասիրությունը չափազանց կարևոր է հայոց լեզվի պատմական զարգացման օրինաչափությունների բացահայտման ու բնութագրման տեսակետից։ Դարձյալ հիշենք մի երկու փաստ։ Գրքում նշվում է, որ, օրինակ, աբշ և ուլ բառերը նախապես պատկանել են օ հիմքին, որն ըստ ծագման առաջինում ձևավորվել է օ, իսկ երկրորդում՝ օ ածանցով (արշ < rk-ō-s կամ rk-so-s, ուլ < pō-ō), որտեղ ածանցի բաղաձայնը ձուլվել է արմատին, իսկ ձայնավորը դարձել է հոլովիչ (իմա՝ բնի ձայնավոր)։ Հե-

աշխատանքի ուրիշների նման այն կարծիքին է, որ իմաստային հիմունքով (այդ բառերը կենդանի են նշում) նրանք անցել են և հիմքի շարքը: Իմաստային դերը կարող էր լինել, չենք ժխտում: Բայց ավելի զորեղ է եղել հնչյունափոխական գործոնը. հայերենի մեջ բառավերջի ուն իրեն հաջորդող լ-ի հետ տվել է ու: Չէ՞ որ որոշ հնդեվրոպական բառեր առանց իմաստային հիշյալ հիմունքի (կենդանի չեն նշանակում) նույնպես ո հիմքից անցել են ու հիմքի: Հիշենք աջ բառը, որը, իմիջիպալոց, գրքում հավասարապես նշված է և օ, և ա հիմքի բառերի մեջ: Սա ծագում է հնիս. *sādhi* կամ *sādhi* արմատից՝ *yō* ածանցով, ուրեմն այնտեղ օ հիմքի բառ է եղել, և հայերենի մեջ էլ սկզբնապես իշխել է նրա ո հոլովումը, բայց գրավոր ամենավաղ հուշարձաններում կան նաև նրա ու հոլովման ձևերը, որոնք ոյ>ու հնչյունափոխության արդյունք էին: Հետագայում իշոյ, մարդու ձևերը դարձան իշու (շատ ավելի ուշ՝ իշի), մարդու, անորոշ դերբայն ամբողջովին անցավ ու հոլովման՝ երգելոյ, սիրելոյ—երգելու, սիրելու և այլն: Դա ընդգրկեց նաև օ/ա հիմքի բառերը, ինչպես՝ այգի—այգւոյ—այգու, զարի—զարւոյ—զարու և այլն: Սա մի ուշագրավ օրինաչափություն է հայոց լեզվի պատմական զարգացման մեջ:

3. Գրքում ամենայն մանրամասնությամբ քննվում է նախալեզվյան շրջանի աճականների և ածանցների հարցը. բերվում են գիտության մեջ դրանց մասին արտահայտված գրեթե բոլոր հիմնական կարծիքները: Դա, անշուշտ, լավ է: Սակայն ավելի լավ կլիներ, եթե հատկապես ընդգծվեր, որ աճականները ընդհանուր են և՛ անվանական, և՛ բայական արմատների համար, իսկ ածանցները տարբերակվում են ու մասնավորվում ըստ անվանականների ու բայականների՝ առանձին-առանձին: Իհարկե, առավել լավ կլիներ, որ անվանականների հետ նույն ձևով քննվեին նաև բայական հիմքերը: Ինչ խոսք, դա էլ իր հերթին մեծ աշխատանք կպահանջեր, և գիրքն էլ այլ բնույթ կունենար:

4. Կան առանձին անճշտություններ: Հնդեվրոպական շարժական շեշտի հետագա վիճակը հայերենում ցուցադրելու նպատակով գրքում բերվում են ուն բառի հունական, հին հնդկական և հայերեն հարացուցային զուգահեռները. հայերենում հոգնակի որոշ թեք հոլովներ ներկայացվում են ուսանց ձևով (տառադարձությամբ): Սակայն մեր հին մատենագրության մեջ այդպիսի ձև վկայված չէ: Կա ուրիշ և շատ հավանաբար՝ ուսաց (իմաստային նուրբ տարբերակումով): Ցույց է տրված նուր բառի համար հույ հոգնակի թեք հոլովաձև (էջ 296): Այդ բառը հոգնակի հոլովաձևերով մեր մատենա-

գրության մեջ ավանդված չէ: Չկա նաև *fnj* բառի համար հոգնակի ուղղականի *fnrf* ձև, որը բերված է *fnrf* ձևին զուգահեռ (էջ 277): Նշվում է, թե ենթադրվում է, որ յղի բառից է առաջացել յղել բայը՝ «ուղարկել» իմաստով (էջ 196): Մինչդեռ իրականում յղի-ից կազմվել են յղանալ և յղենալ (աշխարհաբարում՝ ողանալ, ողիանալ, իմաստային տարբերությամբ): Արմատն է լի<հնիս. *plē*: Իսկ յղել բայը կազմվել է ուղի բառից, որը և ծագում է հնիս. *ul* արմատից: Դրանից հնում ունեինք նաև յուղարկել: Սրանից է հետագայի ուղարկել-ը (բարբառներում՝ ղըրկել, ղղըրկել, օղորկել, ղարկել և այլն):

Հին հայերենի ենթակայական (ներկա) դերբայի աղ (<հնիս. *atl*) մասնիկը գրքում բերված համապատասխան օրինակներում նույն ձևով ցույց է տրվում նաև թեք հոլովաձևերում (ինչպես՝ ծնալո-ծնալի, ծնալաց և այլն): Այնինչ հայտնի է, որ որպես կանոն հայ հին մատենագրության մեջ հենց դասական շրջանում էլ թեք հոլովներում հիշյալ մասնիկը ներկայանում է ող ձևով (ծնողի, ծնողաց և այլն): Իհարկե, ուղիղ ձևում էլ աղ ձևի հետ կարող էր հանդիպել ող ձևը: Բայց թեք ձևերում այդպիսի զուգահեռություն չկար, այլ ինչպես նշեցինք, միայն ող ձևն էր: Այստեղ նկատի չենք առնում հոգնական շրջանի այլևայլ փոփոխությունները (աղ>օղ և այլն):

Իհնչ հարկ կար հող բառը նշելու որպես ծագումն առաջած անհայտ բառի օրինակ (էջ 27), երբ այն բերվում է ծագումով հայտնի հնդեվրոպական ո հոլովման բառերի շարքում (էջ 164):

Շատ լավ է, որ ուսումնասիրության մեջ բերվող հայերեն բառերի դիմաց նշվում են նրանց իմաստները ուսերեն թարգմանությամբ: Դրանք հիմնականում ճիշտ են, սակայն տեղ-տեղ հանդիպում են նաև ոչ ճիշտ թարգմանություններ: Այսպես. *fnrf*-ը թարգմանվում է «ноздры» (էջ 203), պիտի լինեք «небо», իսկ «ноздры»-ն «ոնգունքն» է: Արաւ-ը մի շարք տեղեր բացատրված է «плуг» (էջ 49, 82, 156 և այլն): Իսկ ուսերենի *плуг* բառը «գութան» է նշանակում: Արաւ-ի համար ճիշտ կլինեք «соха» նշումը, ինչպես որ տրված է 77-րդ էջում: Պալաւ-ը թարգմանված է «зеленое, юное», (էջ 202), որը կպատշաճեք թերևս դալաւ-ին, բայց այստեղ խոսք չէր կարող լինել դրա մասին, որովհետև տվյալ դեպքում խոսվում է ի-ա հոլովման բառերի մասին, իսկ դալաւ-ը վերաբերում է ո հոլովման, որը և նշվում է այդ բաժնում (էջ 163): Աջ-ը ու հոլովման բաժնում թարգմանված է «левая (рука, сторона)» (էջ 230), իսկ ո հոլովման բաժնում (էջ 161) ճիշտ է թարգմանված և այլն: Սրանք,

անշուշտ, անուշադրության արդյունք են և հեշտությամբ կարող էին ուղղվել:

Բառերի տառադարձության մեջ սովորաբար ցույց չի տրվում բառամիջում լսվող ու-ն (ծ) ինչպես՝ anjn, atamn, փոխանակ՝ anjən, ata-mən և այլն: Չէ՞ որ կիրառված է տառադարձություն (տրանսկրիպցիա) և ոչ թե գրադարձություն (տրանսլիտերացիա): Սա «մանրուք» չէ և շատ կարևոր է նման աշխատության համար:

Ինչպես կարելի է նկատել, մեր դիտողությունները ավելի շատ ցանկության բնույթ ունեն՝ ուղղված գիրքը ավելի կատարյալ տեսնելու նպատակին, հնարավոր վերահրատարակության դեպքում: Ը դեպ, որոշակիորեն զգացվում է նրա հայերեն թարգմանության կարիքը:

Դրանով նրա օգտագործումն ավելի մատչելի կդառնա հայերենագիտության մեջ մասնագիտացողների համար:

Բանասիրական գիտությունների դոկտոր է. Գ. Թումանյանն ստեղծել է լուրջ ու արժեքավոր աշխատություն, որի և տեսական, և գործնական նշանակությունն ակնբախ է: Սա հաջորդել է նրա մի քանի ծանրակշիռ մենագրություններին և վկայում է հեղինակի գիտական հետաքրքրությունների լայն շրջանականների, անդադրում աշխատանքի, հետազոտական նշանակալից ծրագրերի մասին: Ուրեմն և հույս է ներշնչում, որ գիտնականը առաջիկայում ևս հանդես կգա հետաքրքրական ու կարևոր ուսումնասիրություններով:

Պրոֆ. Ա. Ա. ԱՐԲԱՆՈՎՅԱՆ

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, Դվին I, կենտրոնական թաղամասի պեղումները 1964—1970 թթ., Երևան, 1976, 115 էջ, գինը 1 ռ. 15 կ.:

Միջնադարյան Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկի՝ Դվինի մատենագրական ու նյութական մշակույթի պատմությունը բաղմալեղմանիորեն ուսումնասիրել է հայագիտության մեծ երախտավոր, Դվինի արշավախմբի բաղմամյա ղեկավար, պրոֆ. Կ. Ղաֆադարյանը¹: Լույս են տեսել նաև Դվինին նվիրված մի շարք այլ ուշագրավ աշխատություններ²: Այս բոլորով հանդերձ, մինչ այժմ չեն եղել քաղաքի առանձին թաղամասերին նվիրված հետազոտություններ: Ա. Քալանթարյանի գրախոսվող աշ-

խատությունը մասամբ լրացնում է այդ բացը: Կենտրոնական թաղամասը միջնադարում քաղաքի հոգեկոր և նյութական մշակույթի կարևոր օջախն էր: Այնտեղ են եղել տաճարները, կաթողիկոսական պալատները և աշխարհիկ այլ շինություններ:

Ներածության մեջ հակիրճ ներկայացված են պեղված հատվածի զբաղեցրած տարածքը, կառույցների դիրքը, շինարարական առանձնահատկությունները և, վերջապես, տեղանքի բնակեցման ժամանակագրական ճիշտ սահմանները:

Առաջին գլուխը վերաբերում է 1964—1970 թթ. պեղումների մանրամասն նկարագրությանը: Ըստ տարիների ներկայացված են պեղված միավորների հնագիտական արդյունքները (Դվինում այդ միավորներն արտահայտվում են քառակուսիների սխեմանով), տրված է հնագիտական շերտերի խորությունը: Քալանթարյանը նկատում է, որ մինչև 893 թ. երկրաշարժը թաղամասը եղել է քաղաքի ամենախիտ բնակեցված հատվածներից մեկը:

Երկրորդ բաժնում, որ նվիրված է շերտագրությանը, հեղինակը համոզիչ բացատրություններով կարողացել է որոշել կենտրոնական թաղամասի հնագիտական յուրաքանչյուր շերտի խորությունը, նյութական մշակույթի բնույթը: Կաթողիկե եկեղեցու արևմտյան մասում կատարված պեղումների միջոցով Ա. Քալանթարյանին հաջողվել է ապացուցել, որ հնավայրի ամենավերին շերտերը պատկանում են XII—XIII դդ. և գտնվում են խիստ վնասված վիճակում:

¹ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952:

² Б. А. Шелховников, Художественная керамика двинских раскопок, МатФАНБ «Секреты» 1940, № 4—5: Նույնի՝ Средневековая художественная керамика Ближнего и Дальнего Востока, նույն տեղում, № 6: Նույնի՝ Керамика и стекло из раскопок г. Двина, «Հայաստանի պատմության պետական թանգարանի աշխատություններ», հատ. IV, 1952: Վ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950: Հ. Մ. Ջանիբեկյան, Ապակե փորձանոթներ Դվինի պեղումներից, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4: Նույնի՝ Դվինի ապակե իրերի ժողովածուն, նույն տեղում, 1966, № 1: Նույնի՝ Դվինի միջնադարյան ապակին IX—XIII դդ., Երևան, 1974: Х. А. Мусегян, Денежное обращение Двина, Ереван, 1962 և այլն: